

Ա խմբի ձեռագրերը եւս հնարաւոր է բաժանել երեք ենթախմբերի, որոնց տարբերութիւնները, սակայն, անհամեմատելի են Բ խմբի ենթախմբերի տարբերութիւնների հետ: ԲԼ եւ Ն ենթախմբերի գրչագրերը անխաթար են պահպանել երկի՝ Յովհան Մամիկոնեանից եկող վերտառութիւնը. «Սկիզբն պատմութեան Չորրորդ Հայոց եւ ժամանակագրութեանն Ջենոբայ Ասորոյ...» (հնագոյն՝ 1220 թ. ընդօրինակուած Ե գրչագրում առաջին թերթերը կորսուած են, ուստի նրա մասին ասուածը ենթադրութեան մակարդակով է): ԲԼ ենթախմբի (Ե, 1, v4, ՄՄ թիւ 1665) բնագրից չնչին շեղումներ ունեցող Ե, Դ եւ Թ գրչագրերի մայր օրինակում մի գիտակ գրչի նախաձեռնութեամբ վերնագիրը դարձուել է Բ խմբի նման՝ «Պատմութիւն Տարաւնոյ, գոր թարգմանեաց Ջենոբ Ասորոց եպիսկոպոսն»: Ն ենթախմբը (Դ, Գ, v6) ստեղծուել է մի վաղ ձեռագրում երկի նիւթերի հերթականութիւնը եւ գլխագրերը որոշ չափով փոփոխելու ճանապարհով (Արծրունեաց իշխանների մասին նիւթերը շեշտելու նպատակադրումով)՝ փաստօրէն վերածուելով մի նոր խմբագրութեան: Մակայն չհանգելով մեզ հասած մնացեալ ձեռագրերից որեւէ մէկին՝ բնագրի գերակշիռ մասով այդ խմբագրութիւնը գերծ է ԲԼ ենթախմբի մայր օրինակի գրչի թոյլ տուած որոշ շեղումներից, ուստի էական դեր է կատարում Ա խմբի մայր գրչագրի կամ ուղղակի՝ Յովհան Մամիկոնեանի բնօրինակային ընթերցումների վերականգնման խնդրում:

Յաւօք, 1941 թ. համեմատական հրատարակութեան աշխատասիրող Աշ. Աբրահամեանը բնագրի հիմքում անվերապահօրէն դրել է պարզեցուած խմբագրումներով եւ համառոտումներով աչքի ընկնող օ ձեռագիրը (ՄՄ թիւ 1328) եւ տապալել քննական հայեացքով սկզբնօրինակային ընթերցումները վերհանելու հնարաւորութիւնը (արժանանալով Լեւոն Խաչիկեանի արդարացի դատապարտմանը): Այդ իմաստով աւելի շահեկան էր Վենետիկի 1832 թ. հրատարակութիւնը (վերատպուած 1889 թ.): Քննութիւնից երեւում է, որ հրատարակչի օգտագործած 5 գրչագրերից մէկը պատկանում է Ա խմբի ԲԼ ենթախմբին (v4), միւսներից երկուսը՝ Բ խմբի ՀՄ (v1,2), երկուսը՝ ՄՎ (v3,5) ենթախմբերին: Վերջին երկու հատուածներում ըստ ամենայնի օգտագործուել է նաեւ Ն ենթախմբին պատկանող թիւ 413 (v6) գրչագիրը, առանց այդ մասին յատուկ նշում կատարելու (վենետիկեան գրչագրերի մասին մեր պատկերացումները հանգում են նաեւ հրատարակուած ձեռագրացուցակի սուղ նիւթերին. այդպէս ձեռագրացուցակների տրամադրած կտորներով վերլուծել ենք նաեւ Վիեննայի թիւ 705 եւ Երուսաղէմի թիւ 1149 գրչագրերի ընթերցումները, իսկ անգլերէն թարգմանութեան մէջ դրուած մի քանի կտորներով՝ Մանկտ-Պետերբուրգի թիւ B 29-ի): Իհարկէ, տարբերցումների սիստեմատիկ նշումների բացակայութիւնը եւ յաճախ ձեռագրերի ամենից պարզեցուած ընթերցումների ոչ քննական ընտրութիւնը էապէս դժուարացնում է վենետիկեան բնագրի օգնութեամբ Ե դարի սկզբնօրինակի մասին պատկերացում կազմելու ջանքերը եւ շփոթութիւններ առաջացնում: Վենետիկի հրատարակութեան ընթերցումները նշել ենք v տառանիշով: Տողատակի ծանօթագրութիւնները տուել ենք v¹⁻³ տառանիշերով, որի թուանշաններից երեւում է, թէ քանի օրինակներում է առկայ տուեալ ընթերցումը, իսկ երբեմն v¹⁻⁵ տառանիշերով ցոյց ենք տուել համապատասխան ճշտուած ձեռագիրը: Պոլսի 1719 թ. հրատարակութեան տարբերցումներից տողատակում ընդգրկել ենք (ըստ Աշ. Աբրահամեանի կատարած համեմատութեան) միայն գլխագրերը՝ զուտ ճանաչողական նպատակով: Քննութիւնից երեւում է, որ այդ հրատարակութեան հիմքում դրուած է եղել Բ խմբի